

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

**19.05.2014թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ  
Գ. Թորոսյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի  
պետ Գ. Մարտիրոսյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության  
բաժնի պետ Բ. Պողոսյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության  
բաժնի պետ Ն. Բաղդասարյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ  
Վ. Արևշատյանը,  
ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման պլանավորման և ծրագրամեթոդա-  
բանական բաժնի պետ Գ. Նշանյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի գլխավոր  
մասնագետ Կ. Շահբազյանը:

### **Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1.«ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 18-Ն, թիվ 19-Ն, թիվ 21-Ն, 2005 թվականի հունիսի 6-ի թիվ 05-Ն, թիվ 06-Ն, թիվ 07-Ն, թիվ 08-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Վ. Սարոյան /

**Որոշեցին՝**

Ուժը կորցրած ճանաչել «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 18-Ն, թիվ 19-Ն, թիվ 21-Ն և 2005 թվականի հունիսի 6-ի թիվ 05-Ն, թիվ 06-Ն, թիվ 07-Ն, թիվ 08-Ն» որոշումները:

*/Նորմատիվ/*

2. «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» ձև թիվ 65-երկաթ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ ՎՊԻՄ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 27-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» ձև թիվ 1-չարտեր (եռամսյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ ՎՊԻՄ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» ձև թիվ 12-ՔԱ (եռամսյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ ՎՊԻՄ 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 21-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» ձև թիվ 30-ՔԱ (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ ՎՊԻՄ 2013թ. սեպտեմբերի 12-ի թիվ 14-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև թիվ 65-ավիա (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևն ու լրացման հրահանգը հաստատելու և «ՀՀ ՎՊԻՄ 2012թ. հուլիսի 9-ի թիվ 21-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Գ. Թորոսյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի արտադրանքի մասին» ձև թիվ 65-երկաթ (տարեկան), «Չարտերային չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» ձև թիվ 1-չարտեր (եռամսյակային), «Կանոնավոր չվերթների և դրանց գծով կատարված աշխատանքների մասին» ձև թիվ 12-ՔԱ (եռամսյակային), «Ինքնաթիռների, ուղղաթիռների չվերթների չվացուցակի կատարման մասին» ձև թիվ 30-ՔԱ (տարեկան), «Ընդհանուր օգտագործման օդային տրանսպորտի Հայաստանյան շարժակազմի արտադրանքի մասին» ձև թիվ 65-ավիա (տարեկան) պետական վիճակագրական ամփոփ

հաշվետվությունների ձևերն ու լրացման հրահանգները և ուժը կորցրած ճանաչել «ՀՀ ՎՊԽ 2012թ. հուլիսի 9-ի թիվ 21-Ն, 2013թ. սեպտեմբերի 12-ի թիվ 14-Ն, 2013թ. հոկտեմբերի 4-ի թիվ 15-Ն, թիվ 21 –Ն և թիվ 27-Ն» որոշումները:

*/Նորմատիվ/*

**3. «2014 թվականի առաջին եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվության մասին» հարցը:**

*/Զեկուցող՝ Վ. Արևշարյան/*

#### **Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն «2014 թվականի առաջին եռամսյակում ՀՀ ԱՎԾ որակի կառավարման աշխատանքային խմբի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը»

*/Անհատական/*

**4. «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 16-Ն հրամանով հաստատված «Ալկոհոլիզմով, թմրամոլությունով, թունամոլությունով հիվանդների մասին» Ձև 38 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևում լրացում կատարելուն հավանություն տալու մասին» հարցը:**

*/Զեկուցողներ՝ Ն. Բաղդասարյան/*

#### **Որոշեցին՝**

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 16-Ն հրամանով հաստատված «Ալկոհոլիզմով, թմրամոլությունով, թունամոլությունով հիվանդների մասին» Ձև 38 (տարեկան) վարչական վիճակագրական հաշվետվության ձևում լրացում կատարելուն:

*/Անհատական/*

5. «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման աշխատանքների (2014թ. համար) ժամանակացույցին» հավանություն տալու մասին, «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում համայնքում բնակավայրերի, համայնքի տարածքում գտնվող այլ բնակատեղերի և դրանցում առկա տնտեսությունների «Ձև թիվ 1 գյուղական- աղյուսակ 1» ցուցակի և համայնքում բնակավայրերի, համայնքի տարածքում գտնվող այլ բնակատեղերի և դրանցում առկա տնտեսությունների և կազմակերպությունների (հիմնարկների) «Ձև թիվ 1 գյուղական - աղյուսակ 2» ամփոփագրի լրացման կարգի» նախագիծը՝ ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նորմատիվ որոշմամբ, ինչպես նաև ստորև թվարկված նախագծերն անհատական որոշումներով հաստատելու՝

1. «ՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման մեթոդաբանական և կազմակերպչական հիմնական դրույթները»,

2. «ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարզային և Երևան քաղաքի գործակալություններում գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները համակարգողների» հուշատետրը,

3. «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում ցուցակագրողների կողմից տնտեսությունների ցուցակների կազմման» հրահանգը,

4. «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման ընթացքում տնտեսությունների ցուցակների ընդունման» կարգը,

5. «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման կազմակերպական պլանների կազմման» կարգը՝ հետևյալ 12 ձևաթղթերով.

- Ձև 1Կ՝ «Քաղաքների հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը»,
- Ձև 2Կ՝ «Քաղաքների հաշվառման տեղամասի հրահանգչական տեղամասերի կազմը»,
- Ձև 3Կ՝ «Քաղաքների հաշվառման շրջանացում»,
- Ձև 4Կ՝ «Գյուղերի հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը»,
- Ձև 5Կ՝ «Գյուղերի հաշվառման տեղամասի հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը»,
- Ձև 6Կ՝ «Գյուղերի հաշվառման շրջանացում»,
- Ձև 7Կ՝ «Միասնական (քաղաքների և գյուղերի) հրահանգչական տեղամասի հաշվային տեղամասերի կազմը»,
- Ձև 8Կ՝ «Միասնական (քաղաքների և գյուղերի) հաշվառման տեղամասի հրահանգչական և հաշվային տեղամասերի կազմը»,
- Ձև 9Կ՝ «Ցուցակ խմբային տնտեսությունների (քրեակատարողական հիմնարկներ, զորամասեր, մանկատներ, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, գիտա-փորձարարական ստորաբաժանումներ) և առևտրային կազմակերպությունների»,
- Ձև 10Կ՝ «Հաշվառման կադրերի պահանջարկ»,
- Ձև 11Կ՝ «Տեղեկանք հաշվառման կադրերի ուսուցման (հրահանգավորման)»,
- Ձև 12Կ՝ «Տեղեկանք բնակչության շրջանում գանգվածային-բացատրական աշխատանքների կազմակերպման մասին» հարցերը:

/Ձեկուցող՝ Գ.Նշանյան/

## **Որոշեցին՝**

Հավանություն տալ և հաստատել ներկայացված որոշումները:

*/Նորմատիվ, անհատական/*

**6. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի մարտի 17-ից 21-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի գեներային վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան /*

**7. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2014 թվականի ապրիլի 14-ից 18-ը «2014 թվականի տվյալներով միջազգային համադրումների ծրագրի շրջանակում ԱՊՀ երկրներում միջազգային համադրումների աշխատանքների իրականացման համար սպառողական ապրանք-ծառայություն ներկայացուցիչների քննարկման և համաձայնեցման նպատակով աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը» մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/*

**8. Հաղորդում Իրանի Իսլամական Հանրապետության Թեհրան և Սպահան քաղաքներում 2014 թվականի մայիսի 3-ից 8-ը Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության միջև 2013 թվականի դեկտեմբերի 6-ին Երևանում ստորագրված համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակում երկու կազմակերպությունների միջև երկկողմանի կապերի ընդլայնումը և վիճակագրական գիտելիքների ու փորձի փոխանակումը թեմայով հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Ա.Սաֆյան, Ա.Հայրապետյան/*

**9. Հաղորդում Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում 2014 թվականի մայիսի 12-ից 14-ը Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը միանալու մասին պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) նախագծի վերջնական տարբերակի պատրաստմանը մասնակցելու վերաբերյալ:**

*/Զեկուցող՝ Ք. Պողոսյան, Կ.Շահբազյան /*

**20.06.2014թ. նիստին**

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Յու.Պողոսյանը, Վ.Դավթյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ.Գրիգորյանը.

***Հրավիրված էին՝***

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետ Ն. Աստվածատուրովան,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջատար մասնագետ Մ. Խաչատրյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը,  
ՀՀ ԱՎԾ բնապահպանության ոլորտի մուտքագրող օպերատոր Ա. Պողպոմոզովան:

***Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.***

1.«Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2010-2012 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի առողջապահական և սնուցման ծրագրերի ասիստենտ Միհրան Հակոբյանին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա /*

### **Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի առողջապահական և սնուցման ծրագրերի ասիստենտ Միհրան Հակոբյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2010-2012 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական /*

**2. Հաղորդում՝** Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի մայիսի 6-ից 9-ը «ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիայի, ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոստատի և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության համատեղ աշխատանքների շրջանակներում կազմակերպված «Ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի հանդիպման» 13-րդ սեսիայի «Ազգային հաշիվների համակարգ 2008-ի ներդրում» խորագրով խորհրդակցությանը» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան /*

**3. Հաղորդում՝** Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում 2014 թվականի մայիսի 12-ից 16-ը «ADETEF միջազգային կազմակերպության կողմից ֆինանսավորվող Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրաստատ) հրավերով «Ազգային հաշիվներ» թեմայով ուսումնական այցելությանը» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս. Խաչատրյան, Ն. Ասրվաճապուրովա, Մ. Խաչատրյան /*

**4. Հաղորդում՝** Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2014 թվականի մայիսի 13-ից 15-ը ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի /ԵՏՀ/ Շրջակա միջավայրի Եվրոպական գործակալության և Եվրոպայի Վիճակագիրների կոնֆերանսի կողմից 2014թ-ի մայիսի 13-15-ը Ժնևում կայացած Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Միջին Ասիայի /ԱԵԿՄԱ/ երկրներում Ջրերի որակի վերաբերյալ տեղեկատվության կառավարման խորհրդակցությանը և ԱԵԿՄԱ-ի երկրների վիճակագիրների ու բնապահպանների միասնական նպատակային աշխատանքային խմբի /ՎԲՄՆԱԽ/ 8-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու.Պողոսյան /*

5. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնության Սանկտ-Պետերբուրգ քաղաքում մայիսի 14-ից 16-ը Միացյալ ազգերի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) կողմից կազմակերպված «Արդյունաբերական արտադրանքի ինդեքսների հաշվարկ» ընդհանուր խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Գ. Մարտիրոսյան, Ա. Անանյան/*

6. Հաղորդում՝ Դանիայի Կոպենհագեն քաղաքում մայիսի 22-ից 23-ը Եվրոպական բնապահպանական գործակալության կողմից կազմակերպված Եվրոպական Բնապահպանական Միասնական Տեղեկատվական Համակարգ-Հարևանության և Համագործակցության Եվրոպական գործիք (ԵԲՄՏՀ-ՀՀԵԳ/ENPI-SEIS) ծրագրի ինֆորմացիոն տեխնոլոգիաների աշխատանքային խմբի 3-րդ խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ա. Պողոսյան/*

7. Հաղորդում՝ Թուրքիայի Հանրապետության Անկարա քաղաքում մայիսի 27-ից 28-ը ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE) և ՄԱԿ-ի պարենի ու գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից կազմակերպված «Ազգային վիճակագրական թղթակիցների համար անտառային արտադրանքի վիճակագրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Վ. Արևշարյան /*

8. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում հունիսի 2-ից 5-ը Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և Ավստրիայի վիճակագրական ծառայության կողմից կազմակերպված «Որակը պաշտոնական վիճակագրությունում. գնահատման մշակույթը» խորագրով աշխատանքային հանդիպմանն ու «Պաշտոնական վիճակագրության որակը» խորագրով (Q2014) Եվրոպական կոնֆերանսին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս.Մասցականյան, Ա.Սաֆյան/*

9. Հաղորդում՝ Ռուսաստանի Դաշնություն Նիժնի Նովգորոդ քաղաքում հունիսի 10-ից 12-ը Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության (ROSSTAT), Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի (EFTA) և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի (UNECE) կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության մոդերնիզացում» խորագրով աշխատանքային հանդիպմանը և ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 51-րդ նիստին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս.Մասցականյան, Ա.Սաֆյան/*